ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

Երևան **01.10.2020 թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) ղեկավարի կողմից բարձրացված՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 22-ի N 16-Լ որոշմամբ հաստատված 2020 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն ԱԱՏՄ կառավարման խորհրդի (Խորհուրդ) կողմից հավանություն տալու վերաբերյալ հարցը Խորհրդի նախագահ՝ Զ. Բաթոյանի առաջարկով որոշվել է իրականացնել հեռակա քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2020 թվականի սեպտեմբերի 30-ին և ավարտվել 2020 թվականի հոկտեմբերի 1-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարց

Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 22-ի N 16-Լ որոշմամբ հաստատված 2020 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն («Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ):

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - Արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան - Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Զ. Բաթոյան - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)

Լ. Նանուշյան - Առողջապահության նախարարի տեղակալ

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
2) Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
3) Ք. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
4) Կ. Բրուտյանը քվեարկեց կողմ,
5) Հ. Պողոսյանը քվեարկեց կողմ,
6) Շ. Դանիելյանը քվեարկեց կողմ,
7) Վ. Պետրոսյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ 7 կողմ, 0 դեմ:

Խորհրդի անդամներից 3-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 22-ի N 16-Լ որոշմամբ հաստատված 2020 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն և «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին գումար հատկացնելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին:

05.10.2020

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: BATOYAN ZARUHI 7909790279 **Զ. ԲԱԹՈՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**